№ 202 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 202

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Սեպտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 4 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՁԿՆԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
Պուշկինսկայա փող., տ. Սունդուկեանցի № 23, ռուսաց սեմինարիայի հանդէպ
ՏԵԼԵՖՈՆ № 395 ՏԵԼԵՖՈՆ № 395
Ամեն օր անընդհատ ստացվում են օսէտրինա, սեվրիւգա, լասօսինա և հատիկաւոր խաւեար, նոյնպէս և ձկնեղէն-մթերքներ: Վաճառվում են բարեխիղճ գներով:
Յարգանքով՝ Ս. Ղուկասեան
(օ. մ.) առ. 919. 20—4

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Երթեւեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Ենֆիաճեանցի
Տելեֆօն 695
Ն. Գ. ՖԷԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, $8^1/_2$-ից մինչև $9^1/_2$, ներքին հիւանդ.:
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:
Գ. Մ. ՄԱՆԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, $11^1/_2$-ից մինչև $12^1/_2$ ժ., սիֆիլիս եւ կաշուէ հիւանդութիւններ:
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը:
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:
Յ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—$2^1/_2$ ժ., աչքի հիւանդ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐՁՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Ն. Գ. ՁԻՁԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կոպէկ:
(օ. մ.) առ. 38. 100—91

Դպրոց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Աշակերտների ընդունելութիւնը ԱՌԱՋԻՆ (աղջիկների համար երկրորդ) դասարանն և պատրաստականի բոլոր բաժանմունքները օգոստոսի 27-ից, ուսումը սեպտ. 5-ից. Բեհբուդեան փող. սեփ. տ. № 25.
(3,6,9,15) 775. առ. 5—5

ԲԺԻՇԿ
ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիսական, սիֆիլիս եւ մորթու հիւանդութիւնների
→ վերադարձաւ ←
և առաջվայ նման ընդունում է հիւանդների
Ընդունելութիւնը ամեն օր 1—4 ժամը ցերեկվայ
7—9 ժամը երեկոյեան
Միխայելեան պր. 38 (Րէալական դպր. դիմաց), հեռ. 663.
(առ.) 841. 10—6

ԻՐԱԳՈՐԾԵՆՔ

Էջմիածին գնացած պատգամաւորները, ներկայացուցիչները և հիւրերը, քաշվելով դէպի իրանց մշտական բնակատեղերը, պէտք է տանեն իրանց հետ մի խոր զգացմունք, այն է՝ մի շարք պարտաւորութիւններ կատարելու պատրաստականութեան ուժեղ ըղձացմունք:

Հաւաքված միայն Էջմիածնում, նրանք քննադատեցին անցեալը և ներկան, յղացին նոր գործունէութեան ծրագիրներ, յայտնեցին անվերջ ցանկութիւններ և ցրվեցին դէպի իրանց տեղերը:

Բայց իւրաքանչիւր խոշոր ժողովրդական գործ պահանջում է հէնց իրան՝ ժողովրդի՝ իրական մասնակցութիւնը այդ գործի մարմնացման ջանքերի մէջ, որպէսզի այդ գործը լինի յարատև, ուժեղ և հաստատուն:

Այդ պատճառով մեր հասարակութեան ներկայացուցիչները կարող են յուսալ արդիւնաւէտ հետևանքների, եթէ նրանց կաջողվի առաջ բերել հանրային գործակցութիւն և Էջմիածնի հետ կապված կրթական, կալուածական և ուրիշ կուլտուրական նպատակները կիրագործվեն կեանքի մէջ միահամուռ ջանքերով, գրաւելով դէպի իրանց թէ մտաւոր-բարոյական ույժեր և թէ նիւթական առատ միջոցներ:

Մենք մեր կողմից յայտնում ենք պատրաստականութիւն՝ զբաղվելու այդ նպատակներին վերաբերեալ խնդիրների և ծրագիրների քննութեամբ, ինչպէս այդ արել ենք յաճախ և անցեալում: Եւ անշուշտ՝ մենք ուրախ կը լինէինք գեռեղելու յօդուածներ և ուսումնասիրութիւններ, որոնք լոյս կը սփռէին քննվող և մշակվող խնդիրների վրայ:

Սակայն պէտք է խոստովանենք և այն, որ շատերը փոխանակ փաստացի և պատճառաբանված ուսումնասիրութիւններ տալու, բաւականանում են միայն ընդհանուր, շատ անգամ արդէն յայտնի խորհրդածութիւնների կրկնութեամբ՝ առանց մտնելու խնդիրների ներքին էութեան և մանրամասն բնութագրումների մէջ մեր իրականութեան պայմանների շրջանում:

Ոչ. ժամանակն է հասարակական գործերի քննութեան և խնդիրների մշակութեան մէջ մտցնել աւելի լուրջ աշխատանք և գործադրել լուրջ ուսումնասիրութեան մեթօդներ:

Թող հասարակութիւնը հերթական դարձնէ իր համար մեր շօշափած խնդիրները և, հոգատար վերաբերմունքով պարզելով նրանց էութիւնը, մշակէ գործունէութեան նոր ծրագիրներ և բանայ ճանապարհ բեղմնաւոր գործունէութեան համար:

Գոնէ այժմ թող սկսվի այդ լուրջ վերաբերմունքը դէպի հանրային խոշոր պարտաւորութիւնները:

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ

(Մեր. հեռագիրներ)

Էջմիածին, 15 սեպտեմբերի

Օծման օրը Վեհափառ Կաթողիկոսը հեռագիր ուղարկեց Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին, որի մէջ յայտնում է իր հաւատարիմ հպատակութեան զգացմունքները: Ստացված են 300 շնորհաւորական հեռագիրներ երկրագնդի զանազան հայաբնակ ծայրերից:

Փոխարքայի հեռագրի մէջ ասված է. «Մատուցանում եմ Ձեր օծման նշանակալից օրը բարեբաղդութեան և աջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններ յօգուտ հայ ժողովրդի և ի հաւատարիմ հպատակութիւն Թագաւոր Կայսրին: Ցաւում եմ, որ այդ օրը չը կարողացայ լինել Էջմիածնում: Յանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղօթքներին»:

Հ. Առաքելեան

Ախալքալաք, 13 սեպտեմբերի

Այսօր տեղական Բարեգ. Ընկ.-ը Նորին Վեհափառութիւն Մատթէոս II-ի օծման առիթով հետևեալ հեռագիրն ուղարկեց.

«Ընթանալով Մեծ Ուսուցչի և ընդհանուր սիրոյ, խաղաղութեան Սահմանողի փշոտ ճանապարհով, Որը սուրբ գաղափարի համար մահ ընդունեց Գողգոթայի վրայ, և, որպէս արժանաւոր աշակերտ, պահպանելով ձեզ ներշնչող պատգամը, դուք սիրով ճգնաւորական կեանքը ս. Սիօնի համեստ խուցի պատերի մէջ փոխադրեցիք պատրիարքական օթեակից, երկաթէ կամքով խորտակելով արևելեան բռնակալութեան սպառնալի շղթաները, և այսօր ծերունի Արարատի ստորոտի վրայ արժանացաք Գրիգոր Լուսաւորչի գահը բազմելու պատւին:

«Ախալքալաքի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, ուրախակից լինելով մի այդպիսի նշանակալից դէպքի, հիացմունքով ջերմ աղօթքներ է վերառաքում Ամենաբարձրեալի Գահին, խնդրելով Ձեր Վեհափառութեան արևշատութիւնը յուրախութիւն դարերով հալածված հայ ժողովրդի և ի բարգաւաճումն հնագոյն քրիստոնեայ լուսաւորչական եկեղեցու:

«Նախագահ Կոլոտպետեանց»

Ախալքալաք, 13 սեպտեմբերի

Ախալքալաք քաղաքի մագործների կողմից կաթողիկոսական տեղակալի անունով ուղարկված է հետևեալ հեռագիրը. «Յայտնում ենք մեր խորին զգացմունքները Վեհափառ Մատթէոս II-ի ս. օծութեան առիթով, և թող այդ օրը լինի նոր դարաշրջանի սկիզբը հայ ժողովրդի համար»:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՐՕԿԿՕՅՈՒՄ

Մէլիլիա, 12 սեպտեմբերի

Ազալազոնում սպանական դիրքում երէկ առաւօտեան ժողովուրդը հրացանաձգութեան ենթարկվեց: Թշնամին վհատվելու մօտ է: Յոյս կայ, որ պատերազմը շուտով կը վերջանայ: Բազմաթիւ մարօկկօցիներ հպատակվեցին և երէկ դուրս եկան շուկան: (Հ. Գ.)

Մէլիլիա, 13 սեպտ.

Սպանական զօրքերն երէկ թնդանօթային յարձակումից յետոյ կարող եղան գրաւել թշնամու դիրքը Տանինի մօտ Ուէդ-ալ-լուասան գետի ափին: Սպանացիների կորուստներն աննշան են, թշնամու կորուստները, ընդհակառակն, մեծ են: Տանինի մօտ կարևոր դիրքը կամրապնդվի և կը ծառայէ կենտրոն յետագայ գործողութիւնների համար:

Ալգուսէմասից հաղորդում են, որ մաւրերի մի շարք յարձակումները յետ են մղված սպանացիներից, բայց որում թշնամին ունեցել է նշանաւոր կորուստներ: (Հ. Գ.)

Մէլիլիա, 13 սեպտ.

Պաշտօնապէս հաղորդում են, որ սպանացիները գրաւել են Պագօրը և հարևան բարձունքները: Բազմաթիւ մաւրեր անձնատուր են եղել և յանձնել են 60 հրացան: (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 14 սեպտ.

Պօկլեվսկի-Կօզէլը հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ Ահմէդ շահին յանձնեց իր հաւատարմագրերը, յետոյ այցելեց պետութեան խնամակալին և արտաքին գործերի մինիստրին: (Հ. Գ.)

Թէհրան, 14 սեպտեմբերի

Սիփէհդարը նշանակվեց մինիստր-նախագահ, Ալէ-ուս-Սալթանէն՝ արտաքին գործերի մինիստր: Նահանգապետների պաշտօնները ամենուրեք տրված են նոր կառավարութիւնից նշանակված անձանց, բացի Ղազվինից և Աստրաբադից: Վաղը Ղազվին կը մեկնի Սիդ-ուդ-Դովլէն. Ամիրազանը գնում է Աստրաբադ:

Զիլլ-Սուլթանը, վճարելով կառավարութեանը 100,000 թուման կանխիկ և տալով 200,000-ի մուրհակ, մեկնեց Էնզելիից, դիմելով Եւրոպա: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 11 սեպտեմբերի

Բ. Դրան և հայ հոգևորականութեան միջև ծագած տարաձայնութիւնները դեռ չեն վերջացել: Բ. Դրան ջանքերը, որոնք ուղղված են համոզելու պատրիարք Դուրեանին յետ վերցնել իր խնդրագիրը հրաժարականի մասին, ապարդիւն են:

Հրաժարական տուեց նաև հայ-կաթօլիկների պատրիարք Սապպաղեանը: Հայերը յոյս ունեն Հռոմի կուրիայի միջամտութեամբ բարելաւել իրանց դրութիւնը:

Բ. Դուռը վճռեց համաձայնել, որ կրէտական հարցի լուծման համար գումարվի մեծ պետութիւնների ներկայացուցիչների կօնֆերէնցիա: («Б.»)

«Թայմսը» գրում է. «Թիւրքական գործերում ամենալուրջ հարց ներկայումս հանդիսանում է հայ պատրիարքի հրաժարականի հարցը, որ սպառնում է խաղաղութեան Փոքր-Ասիայում: Պատժելով Ադանայի ջարդերի մեղաւոր մահմեդականներին, երիտասարդթիւրքերը առաջինը կորցրին մահմեդականների համակրութիւնը, չը վարվելով օրէնքի առաջ ընդհանուր հաւասարութեան սկզբունքներով: Պատրիարքը պէտք է բաւական լինի այդտեսակ աջողութիւնից և չափազանց չը լարէ լարերը»:

«La Turquie»-ում (8|21 սեպտ.) կարդում ենք, որ օսմ. կառավարութիւնը չէ կարողացել աւելի յարմար անձ գտնել արտաքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնի համար, հետևապէս Ազարեան էֆ. մնում է այդ պաշտօնում վերջնականապէս:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 10 սեպտ.

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Տիմիրեազևը շուտով թողնում է իր պաշտօնը անձնական և ընտանեկան պատճառներով:

«Г. М.»-ի ասելով, այդ պաշտօնն առաջարկված է Կրեստովնիկովին:

Դրական ձևով է որոշված այն հարցը, որ Ֆինլանդիան պարտաւորապէս մասնակցելու է պետութեան զինուորական ծախքերին: («Б.»)

Պետերբուրգ, 11 սեպտեմբերի

Սենատորների պահպանութեան համար 1910 թւականի ընթացքում արդարադատութեան մինիստրութիւնը պահանջում է 763,630 րուբլի:

Մոսկվայի հայ գաղութը այս սեզոնին բանում է իր կլուբը:

Կիևից ուղարկված է յատուկ հերթական գնացք՝ բաղկացած ութ վագոնից և մի հատ էլ բրեղէնների վագոնից պարսից նախկին շահին Կովկասից Օդեսսա բերելու համար: Գնացքի մէջ շինված են ճաշարան, խոհանոց և ննջարան. մի առանձին վագոն յատկացված է շահի հարեմին: («Б.»)

Պետերբուրգ, 12 սեպտեմբերի

Բիւջէն կազմված է առանց դեֆիցիտի: Արտակարգ ծախքերի պակաս միջոցները ծածկելու համար մօտաւորապէս 120 միլիօն րուբլի մտադրվում է բաց թողնել ներքին փոխառութիւն:

Մինիստր Իզվօլսկին սեպտեմբերի վերջերը մեկնում է Ղրիմ, ուր ներկայ կը լինի թիւրքաց դեսպանութեան ընդունելութեան: («Б.»)

Տէրիօկի, 12 սեպտ.

Երեկոյեան ժամը 10-ի մօտերը անյայտ պատճառով հրդեհ ծագեց Հիւսիսային հիւրանոցում, որ յայտնի է Հերցէնշտէյնի սպանութեան գործի առիթով: Գիշերվայ ժամը 11-ի մօտերը հիւրանոցը մինչև վերջին թելը այրվեց: (Հ. Գ.)

Ֆրանկֆուրտ, 12 սեպտեմբերի

Սեպտ. 20—27-ը այստեղ տեղի կունենան օդագնացութեան միջազգային մրցութիւնները: Մօտ 12 օդագնացներ, որոնց թւումն է Բլէրիօն, արդէն համաձայնութիւն են յայտնել մասնակցել թռիչքներին: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 13 սեպտեմբերի

«Կոր. Բիւրօն» հաղորդում է, որ երէկ, Ֆրանց-Յօսէֆ կայսրի՝ Վեկերլէին տուած ունկնդրութեան ժամանակ ոչ մի որոշումն չը կայացաւ կաբինէտի հրաժարականի վերաբերութեամբ: Սակայն, թւում է, կաբինէտը հրաժարական կը տայ, որովհետև պատգամաւորների պալատում երեքշաբթի օրը Վեկերլէն այդ մասին տեղեկութիւն կը տայ: Լուրերին նայած, Կօշուտը, իբրև մեծամասնութեան պարագլուխ, Թագաւորից կը հրաւիրվի կաբինէտ կազմելու յանձնարարութեամբ: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 13 սեպտեմբերի

Արդարադատութեան մինիստր Գիւնտէրը նշանակվեց վճռաբեկ դատարանի նախագահ: Արդարադատութեան ժամանակաւոր մինիստր նշանակվեց Վեկերլէն: (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 3 սեպտեմբեր

Պօլսի պատերազմական ատեանը, որ սեպտեմբերի 2-ի նիստին մէջ, քննութեան առնելով «Հայրենիք» լրագրի 1463-դ թիւը, ուրկէ սկսեալ կը պահէ նոյն թերթը վերտառութիւն մը խոշոր գիրերով, թէ աւարառութեան դէմ կը պահանջեն համերաշխութեան օրէնք մը, մեծ տուգանքի մը դատապարտեց «Հայրենիք», այդ վերտառութեան ներքև գրուած առաջին յօդուածովը, առաջարկեց, որ կառավարութիւնը այսուհետև ստիպէ, հայ գիւղ մը թալանի տրուած ատեն, շրջակայ թիւրք գիւղերը՝ տուժելու թալանուած ապրանքները և կամ գտնելու: Ատիկա, օրէնքի մը բացակայութեան ատեն, ամենէն կարճ ճանապարհն է՝ արգելք դնելու անյագ աւարառութեան անզուսպ տենչանքին, որ միշտ վառ կը մնայ թիւրք կամ քիւրդ խուժանի կուրծքին ներքև:

Զինուորական ատեանը, ինչպէս կ'երևի, գոհ մնացած չէ «Հայրենիքի» այդօրինակ յայտարարութենէ մը և կամ խմբագրականէ մը, որուն գործադրութիւնը պիտի բերէր սկզբունքով ընդունիլ, թէ երկրին մէջ իսլամ տարրերը աւարառու են, թալանող են, գեավուրներու ինչքին, կեանքին ու ստացուածքին աչք ունին: Զինուորական ատեանը, Ռամազանի նախընթաց օրը, փութաց դատապարտել «Հայրենիք»-ը 100 ոսկի տուգանքի,—գումար մը, որ ահագին բեռ մըն է ներկայ հանգամանքներու մէջ, և գրապէս ապացուցանել, որ Ղուրանի հաւատացող ժողովուրդը յաւիտեան աչք չունի գեավուրի ստացուածքին, ի փառս և ի պատիւ մարգարէին:

Անկէ առաջ, Համիդի օրով, Թիւրքական նշանաբան մըն էր, քրիստոնեաներու, մանաւանդ հայերու դէմ, ըսել, թէ «հաւատքիս քֆրեց». այդ մէկ խօսքը, իսլամի մը, փնթի քիւրդի մը բերնին մէջ, կը բաւէր դատապարտութեան զէնք մը ըլլալ: Հիմա, պաշտօնական շրջանակներու մէջ, հայ թերթի մը դատապարտութեան համար սովորութիւն է ըսել, թէ իր այս-ինչ յօդուածը գրգիչ է և կը փոխէ երկրին այլ և այլ տարրերու մէջ տիրող կամ հաստատուելիք համերաշխութիւնը: Զինուորական ատեանները, այդ ուղղութեամբ առաջնորդուած, կը գործեն անխախտօրէն, վճիռ կուտան. «Մանզումէի Էֆքեար» ընդհատուեցաւ անդարձօրէն, «Բիւզանդիոն» 10 ոսկի տուգանք տուաւ, և հիմա «Հայրենիք» պիտի տայ 100 ոսկի, մօտ 1000 րուբլի գումար մը:

Բ. Դուռը պէտք եղած փութկոտութիւնը չուզեր տալ պատրիարքի հրաժարականի մասին: Հիմի փոխան [illegible] թէ յայտարարած ըլլայ, որ խառն յանձնախմբի մը մէջ, կազմուած պաշտօնատարներէ և հայերէ, քննուի պատրիարքի հրաժարման հարցը ու եզրակացութեան մը յանգիլ կարելի ըլլայ:

Վարչութեան խառն ժողովները, իրենց յաջորդական նիստերուն մէջ, շփոթուած թէ ինչ ուղղութիւն պէտք է բռնել, հարկ տեսած են ազգ. ժողովի ներկայացնել իրերու ներկայ վիճակը ու ըստ այնմ ընել ինչ որ անհրաժեշտ համարուի: Երեսփոխանութիւնը, իր վաղուան նիստին մէջ, պիտի զբաղի այդ կարևոր հարցերով:

Կախաղանի դատապարտուած 5 հայերը, զինուորական ատեանի հրամանով, որուն վճիռները «անբեկանելի» կը հրատարակէ կառավարութիւնը, կախուած են Կիլիկիոյ մէջ: Տեղական բոլոր թերթերու մէջ հրատարակուեցաւ այդ լուրը. և տակաւին ցայսօր պատրիարքարանի հեռագրուած չէ:

Առաջին օրուընէ իսկ ակներև էր, որ կառավարութիւնը պիտի պնդէր այդ դատապարտուածներու մահավճիռին գործադրութեանը վրայ: Ինչպէս գրուած է նախընթաց թղթակցութիւններով, կերևի, որ այդ հայերը անձնապաշտպանութեան գործը, քիչ մը լայն շրջանակի մէջ, գործ դրած են, և փոխանակ սպասելու, որ ուրիշներ գան զիրենք սուրի և հրացանի գնդակներու տալու, իրենք, արիւնարբու թշնամիէն աւելի ճարպիկ, իրենք փութացած ըլլան վրէժխնդրութեան գործը պէտք եղածին պէս և թերևս անկէ ալ աւելի՝ աջողապէս գործադրելու: Ու. այդ տողերը կը գրեմ ենթադրութեամբ և ոչ թէ ստուգապէս կամ հաւաստի աղբիւրներէ քաղած:

Այս ամառ, թերևս սեպտեմբերի մինչև 15, դէպի Եւրոպա ճամբայ կը հանուի օսմանցի ուսանողութիւն մը, զանազան մասնագիտութեանց համար, օրինակ, քիմիագիտութիւն, բնագիտութիւն, ուսուցչութիւն, երկրագործութիւն, մեքենագիտութիւն, երկրաչափութիւն, բարձրագոյն մաթեմաթիք: Քննութեանց մէջ յաջողապէս իրաւունք ստացած են 33 թուրք, 10 հայ, 2 յոյն և 2 հրեայ: Պետութիւնը, ճանապարհի ծախսի հետ, իւրաքանչիւր ուսանողի պիտի վճարէ ամսական 300 ֆրանք: Դարձին, այդ պարոնները, որոշ ամսաթոշակներով, պարտաւոր պիտի ըլլան պետութեան ծառայելու իրենց ունեցած մասնագիտութեանցը համեմատ, ամբողջ 5 տարի պայմանաժամով: Անկէ ետքը իւրաքանչիւրը ազատ է անկախօրէն գործելու: Կառավարութիւնը, իր այդ պայմանը կանխաւ ապահովելու համար, իւրաքանչիւր ուսանողի համար կը պահանջէ 500 ոսկիի երաշխաւորութիւն: Մեր ուսանողներուն երաշխաւորն է պատրիարքարանը:

Քննութեանց մէջ վաստկողներն են Պօլսի կեդր. վարժարանի ընթացաւարտները, մէկ Սանասարեանցի*), Պանկալթի Մխիթարեան ուսանող մը: Շնորհաւորելով մեր այդ ուսանողները, կը մաղթենք, որ փառքով դառնան ու փառքով գործակցին երկրին վերածնութեանը գործին: Շահէն

ՍՊԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲՈՂՈՔԸ

Սեպտեմբերի 2-ին Մադրիդում կայացաւ տեղական լրագիրների խմբագիրների ժողովը, որը որոշեց պատգամաւորութիւն ուղարկել Սան-Սեբաստիան՝ բացատրելու համար թագաւորին այն անտանելի դրութիւնը, որի մէջ դրված է սպանական մամուլը իշխանութիւնների գործողութիւնների և ցէնզուրայի շնորհիւ: Բացի դրանից որոշվեց դիմել գաւառական մամուլի բոլոր օրգաններին, նոյնպէս և բոլոր քաղաքական կուսակցութիւնների աչքի ընկնող գործիչներին՝ հրաւիրելով նրանց միանալ Մադրիդի մամուլի բողոքին:

Այս օրերս «Heraldo» լրագիրը յայտարարեց, որ մերձակայ համարներից մէկում կը տպվի մի ինչ-որ յօդուած: Թէպէտ և Սպանիայում օրէնքով ոչ մի նախնական ցէնզուրա չը կայ, այնու ամենայնիւ ներքին գործերի մինիստրը թոյլ տուեց իրան դիմել լրագրի խմբագրութեանը յայտարարելով, որ նա միայն այն ժամանակ կը թոյլատրէ խոստացված յօդուածի տպագրութիւնը, եթէ յօդուածը նախապէս կը ներկայացվի իրան՝ քննութեան համար: Խմբագրութիւնը, ի հարկէ, գերադասեց չը տպագրել մինիստրին այնքան հետաքրքրող յօդուածը:

Աւելի բնորոշ է «Correspondencia» լրագրի դէպքը, որի խմբագիրը կալանաւորվեց, որովհետև նրա լրագիրը դէմ էր մինիստրութեան: Կառավարութեան կարգադրութեամբ, վերոյիշեալ լրագրի խմբագրութիւնը միայն մի քանի խօսքով հաղորդեց ընթերցողներին խմբագրի կալանաւորութեան լուրը, իսկ որևէ կօմենտարիաներ անել խստապէս արգելված էր նրան:

Մամուլը արդարացի կերպով շեշտում է, որ սպանական լրագիրների նախկին դրութիւնը, երբ յետադէմ օրէնքներ կային և գոյութիւն ունէր ցէնզուրա, աւելի լաւ էր, քան կառավարութեան ներկայ կամայականութեան ժամանակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Էջմիածին, 10 սեպտեմբերի

Դարձեալ Էջմիածնումն ենք: Դարձեալ Էջմիածինը դէպ ինքն է գրաւում հայ աշխարհի զանազան կէտերից ներկայացուցիչներ, պատգամաւորներ, ուխտաւորներ, արանց և կանանց, ծերոց և տղայոց:

Այս անգամ ուխտաւորների և այցելուների մեծ բազմութիւն եկել է Թիւրքահայաստանից, գլխաւորապէս Երզնկայից, Բաղէշից, Վանից: Այս առաջին անգամն է, որ Թիւրքահայաստանը հնարաւորութիւն ունի ազատ, համարձակ, անարգել անցնել սահմանը՝ առանց ենթարկվելու քիւրդերի և աւազակների կողոպտման:

Ուստի և Էջմիածնի ամեն մի անկիւնում, անտառում, լճի ափին, Վանքի գաւթում, նկատվում են կարմիր ֆէսաւորների երկար շարքեր, նստած իրար կողքին, զրուցելիս, իրանց շուրջը համախմբած հարցասէր վաղարշապատցիներ և այլ գիւղացիներ, որոնց նրանք պատմում են իրանց գլխին եկած աղէտները, քաշած տանջանքները, արկածները:

Գրեթէ մի տարի առաջ մենք համախմբվեցինք Էջմիածնում, ընտրելու Ամենայն Հայոց Կաթողիկոս, և ընտրեցինք իբրև արժանաւորագոյն անձն՝ Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին:

Այսօր եկել ենք մեր ընտրած Հայրապետի օծմանը ներկայ լինելու:

Օծումը, ինչպէս յայտնի է, կը կատարվի կիրակի, սեպտեմբերի 13-ին, բայց վաղը, շաբաթ, տեղի կունենայ երդման արարողութիւնը: Հայոց կաթողիկոսները, իբրև լուսաւորչական սինօդի նախագահ, պարտաւոր են օծումից առաջ տալ երդումն հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան առ Ռուսաց Գահը, Ռուսական օրէնքը, համաձայն Պօլօժենիայի սահմանած ձևի, ինչպէս և պարտաւոր են, համաձայն Մաշտոցի, տալ երդումն հայոց եկեղեցու աւանդութիւնների և օրէնքների անթերի պահպանութեան համար:

Երդման արարողութեան—որ նշանակված է վաղը, պատարագից յետոյ, ժամը 12-ին—ներկայ գտնվելու համար, այսօր Երևանից եկաւ այստեղ նահանգապետ կոմս Տիզէնհաուզէնը: Բացի նրանից երդմանը ներկայ կը լինեն և սինօդի պրօկուրօրն ու սինօդի ամբողջ կազմը:

Պատգամաւորներին, հիւրերին, ուխտաւորներին ընդունելու, տեղաւորելու և հիւրասիրելու համար կազմված կայ մի առանձին կարգադրիչ յանձնաժողով, որի նախագահն է Գարեգին վարդապետը, իսկ անդամները՝ Խորէն և Ներսէս վարդապետները և Մեսրոպ Արովեան: Պէտք է ասել, որ յանձնաժողովը գործում է եռանդով և բաւական լաւ է տանում իր գործը. կարգ և կանոնը, մաքրութիւնը աչքի են ընկնում: Պատգամաւորներին բնակարաններ տրվում են ճեմարանում: Անկողինները մաքուր են, սպասաւորներ բնական մեծ թւով կան, սեղանը, հացկերոյթը նոյնիսկ շռայլ, այնպէս որ հիւրասիրութեան կողմից ոչինչ գանգատվելու բան չունենք: Թիւրքիայից եկած բազմաթիւ ուխտաւորներն ևս խնամվում են և նրանց ևս նոյն սեղանատանը ճաշ է տրվում:

Դեռ մինչև այսօր Թիւրքիայի հայութեան կողմից պաշտօնական ներկայացուցիչներ չը կան և տեղեկութիւն ևս չը կայ, թէ գալու են: Պատգամաւորներ եկել են առ այժմ Թիֆլիսից, Բագուից, Աստրախանից, Երևանից, Ստաւրօպօլից, Հին-Նախիջևանից, Էջմիածնի շրջակայ գիւղերից, Ալէքսանդրօպօլից և այլն: Եղանակը շատ գեղեցիկ է, նոյն իսկ տաք, իսկ գիշերները շատ զով:

Եկած պատգամաւորների մէջ ձգտումն է երևում ունենալ խորհրդակցական ժողովներ՝ մի քանի կարևոր ազգային-եկեղեցական հարցերի մասին խորհրդակցելու և Կաթողիկոսին ներկայացնելու մի քանի խնդիրներ, բայց դեռ ոչինչ չէ որոշված: Թեմական պատգամաւորներից, որոնց վրա ընտրողական ժողովը պարտաւորութիւն էր դրել գալ օծմանը Էջմիածին և ներկայացնել Կաթողիկոսին ժողովի որոշումները, առ այժմ եկել է միայն Ղարաբաղի թեմի պատգամաւոր Հ. Առաքելեանը:

Բագուի պատգամաւորները բերել են իրանց հետ Էջմիածնի հողերի տուրքման վերջնական ծրագիրը և երեկ, ներկայացնելով Կաթողիկոսին, յայտնեցին, թէ այս հոկտ. 1-ից կը սկսեն աշխատութիւնները:

Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեց ընդունել և ինձ երեկ երեկոյեան: Եւ մօտ մի ժամվայ մեր խօսակցութեան առարկան ես կը հաղորդեմ յետոյ: Առ այժմ այսքանը կասեմ, որ Կաթողիկոսը Բիւրականում գտնված ժամանակը գործ է դրել ուսումնասիրելու գործերը և այժմ արդէն լիուլի տեղեկութիւններ ունի իր առաջիկայ գործունէութեանը ենթակայ բոլոր հարցերի մասին:

Ամենքի հոգսերի և խօսակցութեան առարկան ճեմարանն է, որի ուսուցչական խումբը կազմված է շատ տարօրինակ կերպով և այնպիսի ձևով, որից դժուար թէ որևէ արդիւնք կարելի լինի սպասել:

Բայց չը կանխենք և թողնենք պատմելու ամեն բան իր կարգին: Հ. Առաքելեան

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԸ

II*)

Թէ որ աստիճանի արդարացի է հաւասարութեան տեսակէտից առևտրի այժմեան հարկատուութեան սիստեմը, դա երևում է այս մի քանի օրինակներից:

Այժմ առևտրից և արդիւնագործութիւնից գանձարանը ստանում է մօտ 90 միլիօն եկամուտ:

Պատենտ վերցնող ձեռնարկութիւնները, թւով 450,070, սրանից վճարում են կէսը՝ 45 միլիօն րուբլի: Միւս կէսը վճարում են ակցիօներական ձեռնարկութիւնները ոչ պատենտային, այլ և այլ հիմունքների վրա:

Պատենտաւոր առևտրի տուած 45 միլիօն հասոյթը կարգաւորվում է այս կերպ. պատենտի փող՝ 16.635,000 ր., տոկոսային տուրք՝ 16.070,000 ր. և բաշխական տուրք՝ (раскладочный сборъ) 12.036,500 ր.:

Պատենտ վերցնող 450,070 ձեռնարկութիւնները մենք կը բաժանենք երկու խմբի, այն տեսակների, որոնց զուտ օգուտը մեծ չէ, չէ գերազանցում վճարած պատենտի 20-պատիկ գնից, կամ ասել է՝ որոնց օգուտը (չափը պակաս է) 5% ցած է պատենտի գնից, և այն տեսակների, որոնց արդիւնքը, զուտ օգուտը, այդ չափից աւել է: Առաջինների թիւը հաւասար է 231,573-ի կամ բոլոր ձեռնարկութիւնների 53 տոկոսը: Սրանց ընդհանուր օգուտը հաւասար է 98,905,000 րուբլու, իսկ վերցրած պատենտների գինը՝ 7,953,722 ր.: Ասել է՝ այս ձեռնարկութիւնները վճարում են զուտ օգտի 8%-ից մի քիչ էլ աւելի: Երկրորդ խմբի ձեռնարկութիւնների թիւը հաւասար է 218,264-ի, բոլորի 47%-ը: Սրանք նոյնպէս վերցնում են պատենտ, բայց իսկապէս, ինչպէս նախորդ յօդուածումս ասացի, ենթակայ են 5% տուրքի:

Այսպիսով ստացվում է մի անհեթեթութիւն. լաւ, աջող պայմանների մէջ գտնվող առևտուրը տալիս է գանձարանին իր օգտի 5%-ը, իսկ անաջող, գուցէ և շատ վատը՝ 8%-ից էլ աւել... Այն էլ նկատենք, որ աջող առևտուրը իր հատուցելիք հարկը վճարում է երկու նուագում, մէկ՝ պատենտ վերցնելիս, յունվարին, մէկ էլ սեպտեմբերին՝ բաշխական տուրքը տալու ժամանակ, իսկ պակաս արդիւնաւոր առևտուրը մէկ անգամից՝ յունվարին (պատենտի փողը): Վերջինները, ինչպէս տեսանք, պատենտի փող վճարում են 8 միլիօն րուբլի, իսկ առաջինները իրանց հատանելիք տուրքից—որը, ընթերցողը ինչպէս գիտէ, հաւասար է օգտի 5 տոկոսին,—պատենտի ձևով յունվարին մտցնում են 7,681,000 ր., իսկ սեպտեմբերին՝ պրօցենտային տուրք՝ 16,069,796 ր.: Այս հաշւից երևում է, որ քիչ արդիւնք ստացող առևտուրը իր ձեռքից տալիս է մօտ 6 միլիօն ր. անժամանակ, որը եթէ հատուցվէր սեպտեմբերին, կարող էր իր տէրերի համար շահ բերել մօտ կէս միլիօն րուբլի:

Մենք տեսանք, որ առևտրի կէսից աւելը, 53 տոկոսը, ծանրաբեռնված է հարկով: Բայց կան վայրեր, ուր առևտրի էլ աւելի մասը, ¾-ը, գտնվում է այս դրութեան մէջ: Այդպիսին է օր. մեր Անդրկովկասը, որտեղ ծանրաբեռնվածները կազմում են բոլոր խանութների գրեթէ 75%-ը: Այստեղ այդ ձեռնարկութիւնները պատենտի ձևով վճարում են իրանց օգտի ոչ 5, այլ 9 տոկոս: A priori նոյնը կարելի է ասել այն տեղերի համար, ուր առևտուրը քիչ է զարգացած, օր. Սիբիրում և այլն: Մեր նկատած այս անհաւասար հարկատուութիւնը նկատել կարելի է և արդիւնագործութեան մէջ, բայց աւելի նուազ չափով, քանի որ այստեղ պատենտի որոշող արտաքին նշաններն աւելի բնորոշ են, կարող են ծառայել իբրև յայտարարներ սպասվող արդիւնքի, արդիւնագործութեան ծաւալը, բանւորների թիւը, ստացած նիւթի քանակը, մեքենաների տեսակը և այլն:

Այնպէս որ պատենտի բոլոր պակասութիւնները ամբողջովին գրեթէ իր վրա է զգում քիչ արդիւնաւոր առևտուրը:

Գեւ. Զաքարեանց

ՆՄՈՒՇՆԵՐ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ

Հայկական կեանքի իրականութիւնը աւելի շատ աչքի է ընկնում իր այլանդակութիւններով, քան թէ լաւագոյն կողմերով: Հասարակական ասպարէզի վրա վխտում են դիպլօմաւոր կամ անդիպլօմ, տիտղոսաւոր կամ անտիտղոս բազմաթիւ ինտելիգենտ անձինք, ստանձնած այլ և այլ հասարակական պաշտօններ, որոնց գործունէութեան արդիւնքը մարդու աչքն է ծակում իր անբնական, տարօրինակ, ուղղակի ապշեցուցիչ հետևանքներով:

Մենք ունենք դուժիններով աստուածաբաններ, փիլիսօփայութեան դօկտօրներ, հասարակական գիտութիւնների ուսումնասիրողներ, մանկավարժներ, լեզուագէտներ և այլն և այլն, սակայն մարդ, երբ մօտից հետևում, ծանօթանում է նրանց գործունէութեան, զարմանքով անմիջապէս հարց է տալիս՝ արդեօք, նրանք իսկապէս աւարտած են... ուսումնասիրած մասնագիտութիւններ, թէ...

Ահա ձեզ մի բարձրաստիճան, գիտական տիտղոս կրող և իրան էլ ռուսագէտ յորջորջող հոգևորական, որը 50-ամեայ յոբելեանի առիթով Փոխարքային մատուցում է հայ հոգևորականութեան կողմից շնորհաւորական մի ուղերձ, գրված ռուսերէն, սակայն լեզուական սխալներով և մինչև իսկ տառասխալներով...

Մի ուրիշ անգամ ուղարկած շնորհաւորական հեռագրում շփոթում են կայսերական տօները: Իսկ երբ նա հանդիսանում է իբրև թարգմանիչ ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականի մօտ, շփոթում և սխալ է թարգմանում Աւետման և Վերափոխման տօները, որով շատ անյարմար կացութեան մէջ է ձգում երկու եկեղեցիների ծայրագոյն ներկայացուցիչներին:

Ահա ձեզ մի աստուածաբան, որը իր մասնագիտութիւնը թողած՝ ճառում, դասաւանդում է աշխարհագրութիւն, կազմում է աշխարհագրութեան դասագիրք և խոյատակում իրան էլ, իբր աստուածաբանական տիտղոսն էլ և համալսարանական դիպլօմն էլ, եթէ այդպիսին ունի իսկապէս:

Ահա ձեզ մի իրաւաբան, որ դասաւանդում է հայերէն, հայոց պատմութիւն և գրականութիւն:

Ահա ձեզ արտասահմանից մի նորաւարտ քիմիկոս, որ ցանկանում է ստանձնել հայ ծխական դպրոցների թեմական տեսչի պաշտօնը:

Եւ մենք սոյնանման օրինակներ շատ ու շատ կարող ենք առաջ բերել, բայց, чтобъ гусей не раздразнить, բաւականանանք ասելով, որ՝ որքան կուզէք, կան մեզ մօտ խմբագիր, դերասան, գրող, ուսուցիչ, աստուածաբան, մանկավարժ, այլ և այլ գիտութիւնների և մանաւանդ փիլիսօփայութեան դօկտօր տիտղոս կրողներ, սակայն երբ քանակից անցնում էք որակին՝ կատարեալ հիասթափութիւն...

Երբ ուզում էք դրանցից մէկնումէկի վրա մասնանշել, իբրև իսկական խմբագրի, գրողի, ուսուցչի և այլն, հաշւում էք և գտնում, որ իսկականները եղակի՝ քանի մի հատ են, իսկ մնացեալը...

Ի հարկէ, այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ մեզ մօտ հարցնող, քննող և ստուգող չը կայ:

Ներկայ մեր հասարակական կեանքում միակ աչքինը, որով չափում, ձևում են մարդու և ըստ այնմ էլ պաշտօն հրամցնում՝ խնամութիւնն է: Օրինակ՝ եթէ Օդեսայի մրգավաճառի գործակատարը կամ Բալախանիի արհեստանոցի վերակացուն այնքան ճարպիկ են գտնվում, որ աջողվում է նրանց մի քանի տարի արտասահմանեան որևէ համալսարանի շեմքը մաշել, հայրենիքում արդէն, շնորհիւ թայֆայականութեան, հռչակվում է հոգեբան-մանկավարժ: Եւ դրանց առօքփառօք բազմեցնում են հայ դպրոցների գլխին:

Ցաւալի է շատ և միանգամայն վնասաբեր, երբ մեր հասարակական ասպարէզը և դրա հայելին՝ գրականութիւնը հեղեղվում են այդ տեսակ տիտղոսաւոր կամ անտիտղոս, արտասահմանեան համալսարանի անունը նիւթապաշտ ոգով շահագործող թերուս գործիչներով և դրանց գրական արգասիքով:

Էլ ո՞վ ասէք, որ դասագիրք չէ կազմում հայ դպրոցների համար:

Էլ ո՞վ ասէք, որ օտար գրականութեան գիտական գրուածքներից բանագողութիւն չէ անում և իր սեփականը հռչակում:

Մէկը Լօմբրօզօյի, Սիւլլիի և այլ հռչակաւոր գիտնականների հոգեբանական օրինակներն և գիտողութիւններն է առաջ բերում իր յօդուածում և դրանց շարքում դասում իր սեփական դիտողութիւնները... ասելով՝ ես ևս...

Մի ուրիշը ճառում է ի պաշտօնէ, որ ինքը իր ուսուցչական-դաստիարակչական գործում հետևում է Լ. Տօլստօյին, նոյն իսկ Հօլլանդիայում (sic!) ընդունված... և այլն:

Մանկավարժ տիտղոս կրող մի երրորդը գովում է իր գրախօսականում մի դասա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՊԱՆԴԱՆՈՑՈՒՄ

(Նուէր Վէգէտարեաններին)

Դուք տեսե՞լ էք, թէ ինչ սառը, անտարբեր կերպով մորթում են այն խեղճ անասուններին, որոնց վիճակված է սպանդանոցում մեռնել... Ողբալի ողորմելի բառաչ են արձակում նրանք, երբ առաջին անգամ սպանդանոց մտնելուց աչքերն ընկնում է իրանց ցեղակիցների կտրված վզի վրա... Սարսափած նրանք յետ-յետ են փախչում, կարծես զգալով այդ բոլոր սարսափը:

Բայց ոյժով ներս են ձգում նրանց:

Վեց ուժեղ ձեռներ եղջիւրներից բռնած, ծեծելով առաջ են քաշում, ճկում վիզը, գլորում... Նա ընկած տեղն էլ յուսահատ ճիգեր է թափում վեր կենալու, ցնցվում է ամբողջ մարմնով... Ի զուր... Սուր դանակը կատարում է իր գործը:

Տեսե՞լ էք, թէ ինչ խիստ են պատժում ուժեղներին, որոնց չեն կարողանում միանգամից գլորել... Բարակ սուր դանակը մխրվում է ծոծրակի մէջ. մի վայրկեան նա դեռ չէ զգում հարուածի մահաբեր լինելը... Նա դեռ կանգնած է, աչքերը գալարվում են, վէրքից արիւնը շատրուանի պէս դուրս է խփում, տաք, կարմիր արիւնը: Կամաց-կամաց թուլանում է, հայեացքը պղտոր, մի վայրկեան էլ, նա գլորվում է լուռ, անձայն...

Կտրված վզից արիւնը դուրս է վժժում փրփրալով. արեան ժայթքումի հետ խուլ ձայներ են լսվում. կարծես անէծք է թափում մարդկանց գլխին:

Նրան հետևում է մի ուրիշը:

Ինչքա՜ն դիակներ են թափված, դիակնե՜ր, որոնք մի քիչ առաջ ապրում էին, որոնք չէին մտածում մեռնել, որոնք ուզում էին ապրել...

Արիւնը յատակի ծակերից թափվում է ծովը. ալիքները կարմրել են, փրփրում ու կատաղած զարնվում ափերին ու յուսահատ փշրվում...

Դրսից լսվում է կենդանի մնացածների բառաչը. նրանք էլ կարծես նախազգում են, որ իրանց վախճանն էլ մօտ է:

Մինչև արմունկները թևքերը ետ քաշած՝ արիւնոտ ձեռներով մի տեղ մաշկում են, մի ուրիշ տեղ կախում են դիակը կենդանիների վրա. տաք, թարմ մսից գոլորշի է բարձրանում:

— Վաղը այս բոլորը պէտք է ուտենք...

Ես սարսափեցի:

— Պէտք է ուտենք... ուտենք... մենք բոլորս... գայլ... արջ... բորենի... շուն...:

Մ. Մանուէլեան

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ*)

Պարսկական յեղափոխական շարժումների բնոյթը պարզաբանվելուց յետոյ, սօց.-դեմ. կազմակերպութեան առաջ դրվեց գործնական մասնակցութեան եղանակի հարցը: Թէ ինչ կերպ մասնակցութիւն կարող էր ունենալ սօց.-դեմօկրատը այս կարգի յեղափոխական շարժումների մէջ, դա պարզ էր այն սօց.-դեմօկրատների համար, որոնք որոշ չափով ծանօթ են սօցիալիզմի և քաղաքական կռւի առնչութիւնների հետ: Սակայն այս հարցում սօց.-դեմ. կազմակերպութեան շարքերում գտնվեցին այնպիսիները, որոնք միանգամայն սխալ հասկանալով Կ. Մարկսի 1848 թւականի գործունէութիւնը՝ առաջարկում էին մի այնպիսի եղանակ, որը ոչ մի, քիչ թէ շատ գիտակից, սօց.-դեմօկրատի համար ընդունելի չէր կարող լինել, և կարող էր, ամենալաւ դէպքում, համարվել 1848 թ. կօմմունիստների (սօց.-դեմօկրատների) գործունէութեան կարիկատուրան: 1847 թ. կազմվում է նախկին «Bund der Gerechten» բանւորական միութիւնից՝ կօմմունիստական միութիւնը, որտեղ մասնակցում էին նաև Կ. Մարկսը և Ֆ. Էնգելսը: «Իր բանւոր դասակարգի համար անհրաժեշտ էր կազմակերպութիւնը, թէկուզ յանուն նոյն իսկ պրօպագանդայի, դրանում,—ասում է Ֆ. Էնգելս,—մենք չենք կասկածում»: Ո՞րն էր կօմմունիստական միութեան վերջնական նպատակը. «Բուրժուազիայի տապալումը, պրօլետարիատի տիրապետութիւնը, ոչնչացումը հին, դասակարգային հակամարտութիւնների վրա հիմնված բուրժուական հասարակութեան և հիմնումը նոր հասարակութեան, առանց դասակարգերի և մասնաւոր սեփականութեան»: Բայց ինչ վերաբերմունք ունէր կօմմունիստական միութիւնը դէպի ընդդիմադիր կուսակցութիւնները: «Գերմանիայում, կօմմ. կուսակցութիւնը կռւում է բուրժուազիայի հետ միասին ամեն անգամ, երբ բուրժուազիան պայքարում է յեղափոխականաբար բացարձակ միապետութեան, ֆէօդալիզմի և մանր բուրժուազիայի դէմ: Սակայն երբէք, ոչ մի վայրկեան, այս կուսակցութիւնը չը պիտի դադարի առաջ բերելու բանւորների մէջ պարզ եւ յստակ գիտակցութիւն, բուրժուազիայի եւ պրօլետարիատի մէջ գոյութիւն ունեցող անտագօնիզմի վերաբերմամբ» (ընդգծումը մերն է: Ա. Չ.):

Յայտնի է պատմութիւնից, որ կօմմունիստական մանիֆեստը Մարկս-Էնգելսի խմբագրութեամբ հրատարակվել էր 1848 թ. յեղափոխութիւնից առաջ, և որ «Գերմանիան այդ ժամանակներում արհեստի և տնային արդիւնագործութեան երկիր էր», որ նշանակում է՝ գտնվում էր մօտաւորապէս անտեսական նոյն դրութեան մէջ, ինչ ժամանակակից Պարսկաստանը: Այս բոլորի հետ միասին, սօցիալիզմի և քաղաքական կռւի առնչութիւնները չըմբռնող մի քանի անձնաւորութիւններ առաջարկում էին սօց.-դեմ. կազմակերպութեան չը կազմակերպվել սօց.-դեմօկրատապէս, թողնել սօցիալիզմը մի առժամանակ, չը կազմակերպել բանւորներին, այլ ձուլվել դեմօկրատների հետ և մղել քաղաքական կռիւ միայն: Սօց.-դեմօկրատական կազմակերպութիւնը գտնելով, որ իր՝ այդ գործելակերպն առաջարկող մի քանի անդամները չէին ըմբռնել ոչ միայն Մարկսի ուսմունքը, այլ և Կ. Կաուցկու նոյն կազմակերպութեան ուղղած նամակի խիստ յստակ և որոշ ցուցմունքները, և համոզված լինելով, որ իր ընդունած գործելակերպը ոչ թէ վնասակար, այլ նոյնիսկ օգտակար կարող է լինել ընդհանուր յեղափոխական շարժմանը, մերժեց այդ առաջարկը ձայների ճնշող մեծամասնութեամբ: Հեշտութեամբ կարելի է տեսնել, որ այդ առաջարկի և սօց.-դեմ. կազմակերպութեան ընդունած գործելակերպի մէջ կայ սկզբունքային տարբերութիւն և ոչ թէ տակտիկական, ինչպէս որ ուզում էին հաւատացնել առաջարկի հեղինակները: Թէ ինչպիսի սխալներ էին անում վերջինները, աւելորդ ենք համարում մէջ բերել՝ չը ձանձրացնելու համար ընթերցողին:

Թաւրիզ Արշաւիր Չիլինկիրեան

(Վ ե ր ջ)

---

*) Ուրիշ Սանասարեանցի քննութեանց մասնակցած չէ:

*) Տես «Մշակ» № 199.

*) Տես «Մշակ» №№ 157, 158, 173, 179, 180, 183, 184, 192, 198, 199 և 200.

գիրք և ապա մի նոր յօդուածով յայտնում, որ ինքը բէթել (!?!) վերաբերմունք է ունեցել այդ դասագրքին, փոխանակ խոստովանելու իր բոբիկութիւնը քննադատուած գրքի առարկայի վերաբերմամբ։

Ներկայումս մեր ինտելիգենտ գործիչների մեծ մասը տարված է միմիայն անձնական, փառասիրական և շահադիտական ձգտումներով ու նպատակներով։ Այդ բանի համար այդ տեսակ գործիչները, առանց զազզելու, զոհում են և դպրոցը, և գրականութիւնը, և այլ հասարակական հաստատութիւնները լոկ շահագործելու և բարեկեցիկ պայմաններ ստեղծելու իրանց անձնական բաւականութեան համար։

Այս տիպի գործիչները բուսան կողմնապահութեան հողի վրա և ներկայումս էլ փարթամօրէն ծլում ու ծաղկում են Թայֆայական մթնոլորտում։

Նրանք թէ խօսքով և թէ գործով հասարակական և գրական-գիտական ասպարէզի վրա հանդէս են գալիս իբրև ծայրայեղ ամբարտաւաններ և պատրաստ անելու ամէն տեսակ զալլաքութիւն հայ ժողովրդի գլխին, իսկ առօրեայ կեանքում արտայայտում են չափազանց գոհունակութիւն ներկայ անտանելի կարգ ու կանոնից, որի շնորհիւ առանձնած լինելով տաքուկ պաշտօններ՝ վայելում են չաղ-չաղ ռոճիկներ։

Եւ այս ամենի համար տուժում է հայ ժողովուրդը, իսկ փառաւորվում և անձնապէս բաղդաւորվում են մեր ներկայ quasi գործիչներից շատ-շատերը, Թև ու Թիկունք ունենալով Թայֆայականութիւնը…

O tempora, o mores! Կալխաս

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղայաբաշի (Նուխու գաւ.), 5 սեպտ.

Սեպտ. 2-ին, գիշերվայ ժամը 11-ին տեղացի Ջաւադ Բէգլարեանցը սեփական տան պատշգամբում քնած ժամանակ՝ անյայտ չարագործը մտնում է բակը և ծառաների միջով անցնելով՝ գտնում է Ջաւադի մահճակալը։ Զոհը խորը քնի մէջ է լինում. չարագործը հրացանի բերանը դէմ է անում ուղղակի ձախ կողքին։ Գնդակը անցնում է ձախից աջ կողմը սրտի ուղղութեամբ, Ջաւադը տեղն ու տեղը մահանում է։

Չարագործն ազատ է։ Հանգուցեալը գիւղի աղքատ դասակարգի ձեռնհաս միակ բարերարն էր. սակայն մեզանում այսպէս են վարձատրում հասարակական բարերարներին։ Տեղացի

Ղուբա, 11 սեպտ.

Ամսիս 6-ի լուսաձագին Ամսար գիւղում մի սարսափելի կռիւ ծագեց նոյն գիւղացիներ Հաջի Կուրբան-Ալու և սրա երեք որդիների՝ մի կողմից, իսկ միւս կողմից մրգեղէնի առեւտրով պարապող հարուստ Մահմէդ Սահար-օղլու, սրա որդի Աբի-Գիւլի, աներորդի Բէքիր Հաջի-Մեհրալի-օղլու և վերջնիս եղբօրորդի Ալի Մուստաֆա-օղլու միջև։ Սպանվեցին Մահմէդը, Աբի-Գիւլը, սրա քոյրը, Բէքիրը, Ալին, մի կալակեցի և մի ուրիշը, ընդամենը Թւով 7 հոգի։ Իսկ ծանրապէս վիրաւորվել են 8 հոգի, որոնց Թւում և կանայք։ Հրացաններից ու ատրճանակներից արձակել են աւելի քան 100 անգամ։ Հրացանաձգութիւնը լսվում էր անգամ Ղուբայից, որը 6 վերստով հեռու է Ամսարից։ Կալանաւորված են Հաջի-Կուրբան Ալին և նրա երեք որդիքը, որոնք, երևի, կարձակվեն երաշխաւորութեամբ։ Մ. Սալամբէգեան

Ախալցխա, 8 սեպտեմբերի

Երէկվայ օրը Ախալցխան կատարում էր մի հանդիսաւոր տօն ի պատիւ Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկու քաղաքիս այցելութեան։ Կէսօրին մօտ՝ բոլոր համքարներն իրանց համքարական դրօշակներով, զինուորական և քաղաքացիական բարձր աստիճանաւորներն իրանց համազգեստներով և քաղաքացիների մի հոծ բազմութիւն խմբված էին քաղաքային վարչութեան տան մօտ և ներսը։ Ժամը 2-ի մօտ նահանգապետն, իր ավտոյով վերադառնալով Աբաստումանից կառքերով, ուղղակի իջաւ քաղաքային վարչութեան տան մօտ։ Լսելով քաղաքիս աւագ Մովսիսեանի զեկուցումը և ընդունելով աղ ու հաց, մտաւ դահլիճ, ուր ընդունեց և բարևեց բոլոր ներկայացուցիչներին. յետոյ անմիջապէս մեկնեց դէպի քաղաքային դպրոց, որտեղ աշակերտներն իրանց ուսուցիչներով սպասում էին նրան։ Աշակերտների շնորհաւորական բարի գալուստի Թոթովանքները լսելով և մտերմաբար բարևելով աշակերտներին և խօսակցելով ուսուցիչների հետ, ուրախ ժպիտով կրկին վերադարձաւ քաղ. վարչ. դահլիճը, ընդունեց աղերսագրերը և երկար խօսակցեց քաղաքային հասարակական զանազան կարիքների մասին և մեկնեց հանգստանալու, խօսք տալով ներկայ լինել քաղաքի կողմից իր պատւին պատրաստած ճաշին։

Ճիշդ ժամը 5-ին քաղաքային պարտէզում, ամառային ակումբի դահլիճներում, հաւաքված էին հրաւիրված բոլոր հիւրերը։ Ահա ժամանեց նահանգապետը իր ավտոյով. զինուորական երաժշտական խումբը նուագեց հանդիսաւոր ընդունելութեան մարշը. սովորական բարևներից յետոյ նահանգապետը բարեհաճեց նկարվել պարտէզի մէջ՝ նախ առանձին և յետոյ խմբով. այնուհետև քաղաքիս աւագը հրաւիրեց և առաջնորդեց հիւրերին դէպի սեղանատուն։ Ճաշի ժամանակ նուագում էր զինուորական երաժշտական խումբը, իսկ պարտէզից դուրս նուագում էին զուռնաչիք զանազան խմբերով։ Ճաշն անցաւ շատ ուրախ, ճառախօսութիւններով, պատշաճաւոր կենացների առաջարկութեան միջոցներին ծափահարութիւններով և որոտնդոստ ուռաներով։ Սեղանը կառավարում էին նախ բժիշկ Գամրեկելօվ և յետոյ բժիշկ Այվազեան, որոնք իրանց պերճախօս ճառերով և ըստ պատշաճի զուարճախօսութիւնով գրաւում էին բոլորի ուշադրութիւնը. բոլոր ճառերի և առաջարկութիւնների մէջ շօշափւում էր քաղաքումս գիմնազիա բանալու հարցը։ Գիշերվայ ժամը 9-ն էր, երբ վերջացաւ ճաշը և նահանգապետն, ու բոլոր հիւրերը ուրախ տրամադրութեան տակ բաժանվեցին միմեանցից։

Այսօր նահանգապետը մեկնեց Սաֆարիայի վանքը, որտեղ կայ ռուսաց միաբանութիւն և վերադառնալով Ախալցխա՝ մեկնեց դէպի Բօրժօմ։ Աւ. Աս.

Դաշբուլաղ (Նուխու գ.), 6 սեպտ.

Կրթական գործը Նուխու գաւառում բոլորովին ետ է մնացել։ Ամբողջ գաւառում միմիայն 2—3 գիւղ կայ, որ ունեն ծխ. դպրոցներ։ Դաշբուլաղի շրջանը, որը կազմված է 5—6 հայ գիւղերից, բոլորովին զուրկ է ծխ. դպրոցներից։ Այս վեց գիւղերից միայն երեք գիւղում կան պետ. միդասեան դպրոցներ, այն է՝ Դաշբուլաղում, Սաբաթլուում և Փօյբուլաղում։ Այս դպրոցները, սակայն, մեզ գրեթէ ոչինչ չեն տալիս։ Դաշբուլաղ գիւղը, որը ունի մօտ 300 տուն, բաւականանում է միդասեան պետ. դպրոցով, որտեղ սովորում են, մօտ 40—45 երեխաներ, մինչդեռ գիւղում կան 150—200 երեխաներ ուսումնարանական հասակի։ Տարիները տարիների ետևից անցնում են, և մենք մնում ենք նոյն տգիտութեան մէջ։ Բոլորովին չեն մտածում միդասեանը երկդասեանի վերածելու կամ ծխ. դպրոց ունենալու մասին։ Այդ աննախանձելի վիճակին քիչ չէ նպաստում նաև այն հանգամանքը, որ մեր գիւղացին ուսումից վախենում է, որովհետև բազմաթիւ փաստերը մինչև օրս եկել են գիւղացուն համոզելու, որ կրթված գիւղացին գիւղում չէ ապրում, խուսափում է գութանի մաճը բռնելուց, հողը հերկելուց։

Նոյն դրութեան մէջ է Նուխի քաղաքը։ Գաղթում են երիտասարդները, թողնելով իրանց ետևից հայրական տունը աւեր, ամբողջ գաւառը տգիտութեան մէջ։ Այդ «կրթված» երիտասարդները կարծում են, թէ գաւառում չէ կարելի ապրել, հին սովորութիւնների մէջ նորութիւն չէ կարելի մտցնել։ Նրանք կարծում են, թէ Թիֆլիսն ու Բագուն երկնքիցն են ընկել։ Բայց թող գիտենան, որ Թիֆլիսն ու Բագուն իրանցով են կենդան, և թող հաստատ իմանան, որ կենդանացնելով այդ քաղաքները՝ աւերում են իրանց հայրենի գաւառները։

Մ. Բէգլարեան

Գօրի, 12 սեպտ.

Շաբաթ, սեպտ. 12-ին, Գօրու հայոց երկսեռ երկդասեան դպրոցում տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Մատթէոս Բ. Կաթողիկոսի օծման նուիրված և դպրոցի բացման հանդէսը։ Հանդէսին ներկայ էին ուսուցչական և հոգաբարձական կազմերը, աշակերտութիւնը, ծնողները և հրաւիրված հասարակութիւնը։ Նախ կատարվեց դպրոցի բացման մաղթանքը, ապա դպրոցի աւագ-ուսուցիչ Ղ. Դերենիկեանը բաց արեց հանդէսը մի ճառով։

Կրօնուսույց քահանան վերախօս երեխաներին և ծնողներին Թարգմանեց աւագուսուցչի ճառը։ Դպրոցի աշակերտուհիներն արտասանեցին օրվայ պատշաճ ոտանաւորներ և երկսեռ մանկանց խումբը երգեց մի շարք ազգային երգեր։ Հանդէսը վերջացաւ մաղթանքով և հոգաբարձու կ. Օրբէլեանը ի դիմաց դպրոցի և հայ հասարակութեան մի հեռագրով շնորհաւորեց ազգընտիր Մատթէոս Բ. Կաթողիկոսի օծման հանդէսը։

Հոգաբարձու

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ռուսաց սինօդի կարգադրութեամբ, հոգևոր վարչութեան կրթական հաստատութիւններում հասակաւոր աշակերտների հետ պէտք է տեղի ունենան կրօնական-բարոյական բովանդակութեան զրոյցներ շաբաթական երկու անգամ, երեկոները, ըստ որում առանձնապէս խորհուրդ է տրվում «պարզաբանել» Տօլստոյի վարդապետութիւնը։

◆ Թիֆլիսի նահանգապետը յայտնել է քաղաքային վարչութեանը, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մշակում է քաղաքային և միջնակարգ պրոֆեսիօնալ ու արհեստաւորաց դպրոցների ցանցը լայնացնելու պլանը. ուստի նահանգապետը դիմում է խնդրելով տեղեկութիւններ հաղորդել դպրոցական հասակ ունեցող երեխաների և Թիֆլիսի նահանգում գոյութիւն ունեցող դպրոցների Թւի մասին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի կարգադրութիւնները. 1) «Նահանգական վարչութեան անունով տրված հրամանով այս սեպտեմբերի 10-ին պաշտօնից արձակվում է խուզարկու բաժանմունքի պետի պաշտօնակատար Ռակացօնը, համաձայն խնդրագրի, և նշանակվում է Թիֆլիսի 2-րդ քաղաքամասի ոստիկանատան պրիստաւի պաշտօնակատար։ Խուզարկու բաժանմունքի պետի պաշտօնակատար ժամանակաւորապէս նշանակվում է 7-րդ ոստիկանատան պրիստաւ Գավիէվը. իսկ 7-րդ ոստիկանատան պրիստաւի պաշտօնը յանձնվում է 2-րդ ոստիկանատան պրիստաւ Դաւիդօվին»։ 2) «Համաձայն Թիֆլիսի քաղաքային դումայի պարտադիր որոշման, բոլոր առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնները Թիֆլիս քաղաքում, բացի դեղատներից և մթերքներ ու անասունների կերակուր վաճառողներից, պէտք է կիրակի օրերը փակ լինեն։ Ընդսմին նախազգուշացնում եմ, որ այնտեղ, ուր ես կը գտնեմ որևէ զանցառութիւն իմ տուած կարգադրութեան, ես անմիջապէս պաշտօնից կարձակեմ տեղական Թաղական վերահսկիչին, պրիստաւը կենթարկվի խիստ պատժի, իսկ կրկնողութեան դէպքում նա էլ կարձակվի պաշտօնից. ըստ որում յատուկ ուշադրութիւնն եմ դարձնում այդ կարգադրութեան վրա 3-րդ, 4-րդ և 9-րդ քաղաքամասերի պրիստաւների»։

◆ Վրաց-իմերէթյան սինօդական գրասենեակն այս օրերս ստացաւ ռուսաց սինօդի հրամանը, որով արգելվում է հոգևորականութեանը՝ պսակել օֆիցէրական աստիճան ունեցողներին առանց վկայականների, որ պէտք է տան զինուորական պետերը այն մասին, թէ պսակը Թոյլատրըվում է։

◆ Թիֆլիսում բացվելիք կանանց բարձր դասընթացքները, Թւում է, այնքան էլ շատ չէ հետաքրքրում Թիֆլիսի հասարակութեանը։ Ընդունելութեան օրից մինչև այժմս տրվել են ընդամենը 160 խնդրագրեր, մինչդեռ, ինչպէս յայտնի է, ուսումը կանոնաւոր կերպով կը սկսվի, երբ ցանկութիւն յայտնած կը լինեն դասընթացքները լսելու 300 հոգի։

◆ Թիֆլիսում ազգաբնակութեան Թիւը հետզհետէ շատանալով կարիք է զգացվում եղած հասարակական հաստատութիւնները, օրինակ հիւանդանոցները, բուժարանները և այլն ընդարձակել։ Հերթական խնդիրներից մէկը ներկայումս դարձրած է նոր հիւանդանոց կառուցելը։ Երկաթուղային վարչութիւնն էլ իր կողմից որոշել է Թիֆլիսում հաստատել առանձին հիւանդանոց սուր վարակիչ հիւանդների համար 20 մահճակալներով։ Այդ գործի համար 1910 Թւի նախահաշւում մտցված է 35,000 րուբլի։ Կարծենք, այդ տեսակ հիւանդանոց մտադրվում է հիմնել նաև Բալաջարի կայարանում։

◆ Քամոյեան օրիորդաց երկդասեան դպրոցի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել ի տեղեկութիւն ծնողների, որ յիշեալ դպրոցի առաջին բաժանմունքում տասը և չորրորդ բաժանմունքում հինգ աշակերտուհու տեղ կայ։ Խնդիրները ընդունվում են մինչև սեպտեմբերի 21-ը։

◆ Այն մասնաժողովը, որին պաշտօն էր տրված քննել Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղագիծ անցնելու հարցը, եկաւ այնպիսի եզրակացութեան, որ այդ գիծը ռազմական տեսակէտից ներկայանում է վերին աստիճանի անհրաժեշտ։ Նրա կառուցմանը կը ձեռնարկվի Ամուրեան երկաթուղին աւարտելուց յետոյ։ («Кс.»)

◆ Գաւառական զինուորակոչութեան ատեանների գործերը վերստուգելուց յետոյ, պաշտօններից հեռացված են գործավարներ Թիֆլիսի—Դօդաեվը, Թէլաւի—Իշխ. Անդրօնիկօվը և Սղնախի—Ռոստոմովը։

◆ Միջնորդութիւն է յարուցված, որ Թոյլ տրվի Վլադիկավկազի օգտին յատկացնել այդ քաղաքում գտնվող կինեմատօգրաֆների ընդհանուր հասոյթի 10%-ը։ Այսպիսի միջնորդութիւն, ինչպէս կը յիշեն ընթերցողները, եղաւ սրանից մի քանի ժամանակ առաջ նաև Թիֆլիսի համար, ուր այժմ բաւական մեծ Թւով սինեմատօգրաֆներ կան։

◆ Արևելեան Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանի օրը, ինչպէս յայտնի է, ինվալիդներին օգնող զինուորական ընկերութեան օգտին Թիֆլիսում տրվեցին մի քանի ներկայացումներ և համերգներ։ Այդ բոլորից ընդհանուր մուտք ստացվեց 2846 ր. 2 կ., որից ծախս եղաւ 2442 ր. 13 կ., այնպէս որ զուտ արդիւնք մնաց միայն 403 ր. 89 կ.։

◆ Ամարանոցի սէզօնը վերջանալուց յետոյ, փակվել են պօստ-հեռագրական ժամանակաւոր բաժանմունքները Կօջօրում, Հաջիքենդում և Դարաչիչագում։

◆ «Баку» լրագրի ասելով, Գանձակի նահանգապետ Կօվալեվը, լուրերի համաձայն, ստանում է նոր պաշտօն։

◆ Այս ամսի 20-ի մօտերը Թիֆլիսում սպասվում է ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Ռուխլօվը։

◆ Ստացանք Նոր-Նախիջևանի հայազգի աղքատաց եկ. հոգաբարձութեան 1908 թ. հաշիւը, որից երևում է, որ առ 1-ն յունվարի 1908 թ. եկեղ. հոգաբարձութեան ձեռքը գտնված ամբողջ ստացուածքի համագումարն էր 744,021 ր. 98 կ., նոյն տարին հոգաբարձութիւնը մուտք ունեցել է 63,611 ր. 46 կ., իսկ ելք 64,817 ր. 28 կ.։

◆ Ստացանք Ատրպետի նոր աշխատութիւնը «Имаматъ» անունով, որի մէջ խօսվում է ընդհանրապէս պարսից հոգևորականութեան մասին։ Գիրքը պարունակում է մի քանի լուսանկարներ, տպված է մաքուր, 208 էջ, լաւ թղթի վրա և արժէ 1 րուբլի։

◆ Ստացանք Ախալքալաքի հայոց եկեղեց.-ծխական հոգաբարձութեան եռամեայ 1905—5 թ. գործունէութիւնը վերստուգ. յանձնաժողովի զեկուցումը։

◆ Ստացանք Գ. Լևոնեանի կազմած «Գծագրութիւն և նկարչութիւն». 1-ին մաս՝ գծեր, ձևեր, մարմիններ. գինն է 20 կ.։ Այս գրքոյկը կարելի է աջողված ձեռնարկների շարքը դասել։

◆ Ստացանք Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Թեմական հոգևոր դպրոցի 1906—9 ուսումնական տարիների հաշիւը։

◆ Ծիթաքուրից, սեպտ. 14-ից, մեզ գրում են. «Երէկ, ամսիս 13-ին, էկսկուրսիայի նպատակով Թիֆլիսից առաւօտվայ գնացքով այստեղ ժամանեցին Թիֆլիսի բէլլական դպրոցի քառասուներկու աշակերտներ իրանց ուսուցիչներով։ Նրանք մինչև երեկոյ մանրակրկիտ դիտելով տեղիս մարգանեցի հանքերը՝ գիշերվայ ժամը 10-ին այստեղից մեկնեցին։ Նրանք իրանց հետ ունէին նկարչական գործիք (ապպարատ) և հետաքրքրական տեսարանները նկարում էին։

«Ամսիս 8-ից այստեղի մարգանեցի մանր արդիւնաբերողները գործադուլ են յայտարարել և պահանջում են էկսպօրտիօրներից մէկ կօպէկով մարգանեցի գինը աւելացնել պուդին, $5^1/_2$ կոպէկից մինչև $6^1/_2$»։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Հանդէս Ամսօրեայի» օգոստոսի համարում կարդում ենք, որ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան նորընտիր աբբահայր գեր. հայր Գրիգոր վ. Գովրիկեան բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ է ստացել թէ հայ և թէ եւրոպացի համակրողների շրջանից։ Այս շնորհաւորութիւնների շարքում գտնում ենք ջերմ հեռագիրներ և գրութիւններ՝ Էջմիածնից Վեհափառ Մատթէոս Բ. Կաթողիկոսից, Կ. Պոլսից՝ հայ-կաթօլիկների պատրիարք-կաթողիկոս Սապպաղեանից, պատրիարք Դուրեան սրբազանից, նախորդ պատրիարք Օրմանեան սրբազանից, Վենետիկի Մխիթարեանների ընդ. աբբա Կիւրեղեան գերապայծառից, Լեմբերգի հայ-կաթօլիկ արքեպիսկոպոս Թէոդորօվիչից, Կ. Պոլսի հայոց ազգ. ժողովի Բ. ատենապետ դոկտոր Վահրամ Թորգոմեանից և այլն։ Իսկ օտարազգիներից ստացված շնորհաւորական Թղթերի մէջ գտնում ենք Հռոմից կարդինալ Մէրրի դէլ Վալի նամակը՝ յանուն սրբ. պապի, բազմաթիւ կարդինալներից, Կ. Պոլսի աւստրիական դեսպանից, Վիեննայի քաղաքապետ Լուէգերից և այլն։ Միանում ենք այս բարեմաղթութիւններին, ի սրտէ բաղձալով որ նորընտիր աբբահայրը «լուսաւորութեան մեծ ռահհորդ մը լինի պատուական Միաբանութեան Վիեննայի», ինչպէս իղձ է յայտնում դոկտոր Թորգոմեան։

Գեր. Գովրիկեան ծնվել է 1841 Թւին, ուրեմն այժմ 68 տարեկան է, բայց կազմուածքով առողջ է և պահպանում է իր երիտասարդական հասակի մտաւոր Թարմութիւնը։ Ս.

◆ Ադանայի կուսակալը հեռագրում է, որ այնտեղի և Սսի հայ երիտասարդները զինուորագրվում և մտնում են օսմանեան բանակը։

◆ Կ. Պոլսի հայոց պատրիարքն օգոստ. 8-ին այցելութիւն է տուել անգլիական, իտալական, ռուսական և ֆրանսիական դեսպաններին Կ. Պոլսում։ Նա, իր այցի միջոցին, բարի գալուստ է մաղթել վերջին երկու պետութեանց դեսպաններին, որոնք նոր էին ժամանել Կ. Պոլիս ու ստանձնել իրանց պաշտօնը։ Այցելութիւնները կրել են շատ սիրալիր բնաւորութիւն։

◆ Սրանից մի քանի տարի առաջ վախճանված Անդրանիկ Եուանճեզուն Թողել էր երեք սնդուկ ձեռագիր, որը քննելու համար ժամանակին մի յանձնաժողով կազմվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին կից։ Այդ յանձնաժողովը օգոստոսի 8-ին նիստ է գումարել։ Այդ նիստում «Բանասէրի» խմբագիր Կար. Բասմաջեան կամեցել է հաստատել, թէ Եուանճեզուն միայն իրան՝ Բասմաջեանին է յանձնել հանգուցեալի «Բաղդատական բառարանի» շարունակութիւնը և ամբողջացումը։ Բասմաջեան բողոքել է նոյնպէս և ձեռագիրների ուսումնասիրութեան դէմ, քանի որ, ըստ կտակի, ինքը պիտի ստանձնէր այդ գործը։ Ձեռագիրների ուսումնասիրութեան գործը, հաւանօրէն, կը վերջանայ մի քանի նիստում։ Բասմաջեանը խոստացել է այս գործի տպագրութեանը յատկացված 6,000 ոսկուց որոշ մի գումար Թողնել պատրիարքարանին՝ գործածվելու համար ազգային-հասարակական կարիքների։

◆ Կիլիկիայի կաթողիկոսից ստացված մի հեռագրից երևում է, որ միմիայն Բէսապում և շրջակայքում հայերի այրված կամ Թալանված գոյքերի արժէքը հասնում է 8700 օսմ. ոսկու։ Ամբողջ Հալէպում անտէր մնացած որբերի ու զրկվածների ապրուստին ու շէնքերի վերաշինութեանը յատկացված է 20,000 օսմ. ոսկի։ Կարօտեալների Թիւը պակաս չէ 5,500 հոգուց, որոնց իւրաքանչիւրին օրական բաժին է ընկնում $5^1/_2$ փարա ($1^1/_{10}$ կոպէկ) և $62^1/_2$ դրամ (մօտ $^1/_2$ ֆունտ.) ցորեն։ Կարօտութիւնն աննկարագրելի է և քաղցից մեռնողների Թիւն անպակաս է։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Սեպտեմբերի 15-ին վերսկսվում են զբաղմունքները Պետական Խորհրդի 1-ին դեպարտամենտում։ Առաջին հերթի վրա կը դրվեն այն գործերը, որոնք հասել են մինչև Պետական Խորհուրդը տարաձայնութիւնների պատճառով սենատում։ Այդ գործերի շարքում մանաւանդ հետաքրքրական են այն երկուսը, որոնց վերաբերմամբ սենատը կատարելապէս հակառակ կարծիք ունեցաւ ոչ միայն արդարադատութեան մինիստրի, այլ և ուրիշ ատեանների ներկայացուցիչների հետ։ Այդ հարցն այն էր Թէ՝ պէ՞տք է արդեօք Բէստուժեան կուրսերը բարձրագոյն դպրոց համարել, և միայն երկու ձայն պակասեց մինչև $^2/_3$-ը, որ անհրաժեշտ է գործի աւարտման համար, չը նայելով որ մինիստրութեան կից յանձնաժողովը այն եզրակացութեան էր եկել, Թէ Բէստուժեան կուրսերը պէտք է բարձրագոյն դպրոց համարել։ Այդ վէճը արդէն 7 տարի է, որ շարունակվում է։ Երկրորդ գործը, որի համար սենատը կրկին դէմ գնաց արդարադատութեան մինիստրին, այն հարցն էր Թէ՝ արդեօք ատամնաբոյժներին պէ՞տք է տալ բարձրագոյն ուսում ունեցող անձանց իրաւունքները։ Արդարադատութեան մինիստրը այդ հարցի վերաբերմամբ դրական պատասխան տուեց, այսինքն՝ որ ատամնաբոյժները պէտք է բարձրագոյն ուսում ունեցող անձանց իրաւունքներն ունենան, հիմնվելով գոյութիւն ունեցող այն մի շարք օրէնքների վրա, որոնք ատամնաբոյժներին տալիս են բարձր ուսում ունեցող անձանց իրաւունքները, սակայն սենատին այնուամենայնիւ չաջողվեց ժողովել ձայների $^2/_3$-ը։

◆ Տարրական կրթութեան համար 1909 Թւի յունիսի 10-ի օրէնքով յատկացված 6 միլիօն րուբլի կրեդիտից ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ուսումնարանական շրջանների տրամադրութեան տակ դրեց 1,380,000 ր., յատկացնելով Պետերբուրգի շրջանին 45,220 ր., Մոսկվայի 44,370 ր., Կազանի 104,820 ր., Օրենբուրգի 122,370 ր., Խարկովի 57,280 ր., Օդեսայի 57,150 ր., Կիէվի 59,370 ր., Վիլնօյի 142,312, Վարշավայի 161,420 ր., Ռիգայի 45,550 ր., Կովկասի 50,020 ր., Արևմտեան Սիբիրի 136,590 ր., Արևելեան Սիբիրի 125,644 ր., Թիւրքեստ. երկրի 121,334 ր. և Պրիամուրեան երկրի տարրական դպրոցների կարիքների համար 97,000 ր.։ Մնացած 4,620,000 ր. դրել է զեմստվօների և քաղաքների տրամադրութեան տակ տարրական կրթութեան կարիքների համար։

◆ Ութամեայ բացակայութիւնից յետոյ Լ. Ն. Տօլստօյը սեպտ. 3-ին այցելեց Մոսկվան, որտեղից նա պիտի կատարէր մի կարճատև ճանապարհորդութիւն՝ այցելելու իր բարեկամ Չերտկօվին, որը յայտնի է որպէս Տօլստօյի մտքերը եռանդուն տարածող և նրա գրուածքների հրատարակիչ՝ արտասահմանում։ Չերտկօվը վերջերս բնակվում էր Տօլստօյի մօտ, Եասնայա Պօլեանայում, բայց այս տարվայ գարնանը ոստիկանութեան պահանջով ստիպված էր Թողնել իր բնակավայրը և աքսոր գնալ։

Տօլստօյի Մոսկվա գալը բարեկամները գաղտնի էին պահել, որպէսզի հետաքրքրվողները և նրա երկրպագուները չանհանգստացնեն 81-ամեայ ծերունուն։ Սակայն Թէ քաղաքում, Թէ կայարանում հասարակութիւնը և անգամ ժողովրդի ստորին խաւերը նրան ճանաչել են և սարքել շատ յուզիչ հանդիպումներ։

◆ Գաղթականութեան վրա հսկող գլխաւոր վարչութեան տեղեկութիւններին նայած, յունվարից մինչև սեպտ. Ռուսաստանից Սիբիր են գաղթել 556,649 հոգի։ Սիբիր են անցել 82,086 հոգի գիւղական համայնքների ներկայացուցիչներ, որ ազատ հողեր որոնեն իրանց համագիւղացիների գաղթելու համար։

◆ Վորոնեժի քաղաքային դուման վճռել է կայացրել գիւղատնտեսական բարձր ուսումնարան հիմնելու անհրաժեշտութեան մասին և պատրաստ է յատկացնել յօգուտ այդ ուսումնարանի քաղաքապատկան հողերից 200—300 դեսեատին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծ-Ղարաքիլիսա, 24 օգոստոսի

Մեծ-Ղարաքիլիսայի Հայ Գիւղատնտ. և Տնայնագ. Ընկ. վարչութիւնը պարտք է համարում շնորհակալութիւն յայտնել մետաքսի Թելերի գործարանատէր Մելիք-Մարութեանցին, որը նուիրեց Ընկերութեանս միջոցներով պահվող Ջուլհականոցին մի ճախարակ և մի Թելահան, որոնք որոշ չափով հեշտացնելով Թել փաթթելու գործողութիւնը՝ եզակի են համարվում իրանց տեսակի մէջ։

Վարչութեան նախագահ՝
Մկրտիչ Նալբանդեան
Քարտուղար՝ Գ. Ճենանեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կովկասեան զինուորական շրջանի շտաբի կառավարիչ Բերխմանին շնորհվում է Ս. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշան։

Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 32, մեռան 18 հոգի. հիւանդներ կան 376։

Եարօսլաւլը, Ռըբինսկը, Կօստրօման՝ գաւառներով, Կիեվը, Սամարան և Տվէրը ճանաչվում են խոլերայից անբարեյաջող. Կիեվի, Կօստրօմայի նահանգները և Պրիմօրի շրջանը—սպառնական։

Մայրաքաղաքի վրայով անցած մագնիսական մրրիկի պատճառով հեռագիրը եւրօպական գլխաւոր գծերից մի քանիսի վրա լաւ չէ գործում։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Զնամէնսկի գիւղում 20 դիմափոխված զինված մարդիկ յափշտակեցին Լօւէվի տնից 60,000 րուբլի, փակելով տնեցիներին ներքնայարկում։ Մայրաքաղաքի վրա տեսանելի եղաւ հիւսիսափայլ։

Նահանգական դատարանը քննեց «Новое Время»-ի հրատարակիչ Սուվօրինի գործը, որ մեղադրվում էր առանց ֆինանսների մինիստրութեան թոյլտւութեան արտասահմանեան վիճակախաղի տոմսերի վաճառման յայտարարութիւնը տպագրելու մէջ։ Դատարանը Սուվօրինին արդարացրեց։

ՍՕՖԻԱ։ Ֆէրդինանդ թագաւորը մեկնեց Ունգարիա։

ՄՕՒԼԷՆ։ (Ալլէի նահ.)։ «Րէպիւբլիկ» օդապարիկը թռիչքի ժամանակ Մուլէնից 8 կիլօմետր հեռաւորութեան վրա պայթեց և ընկաւ կայծակի արագութեամբ։ Նաւակը ջարդվեց խճուղու վրա։ Զոհվեցին չորս հոգի։

ՊԷԿԻՆ։ Կալգանի երկաթուղագծի կառուցումը սկսվեց։ Կարգադրված է պօստային ծառայութիւն մտցնել Տիբէտում։

ՎԷՆԴԷՆ։ Նկատվեց հիւսիսափայլ։

ՍՕՖԻԱ։ Քաղաքային վարչութիւնը որոշեց 15 միլիօն ֆրանկի փոխառութիւն կնքել քաղաքը գեղեցկացնելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրները ոգևորված քննում են ընդհանուր օրէնսդրական ընտրութիւնների հարցը, որոնք ներկայումս համարվում են անխուսափելի։ Պահպանողականները և լիբէրալները գտնում են, որ լօրդերը բիւջէտի վերաբերութեամբ ձեռնարկում են այնպիսի գործողութիւններ, որոնց պատճառով ընտրութիւնները դառնում են հերթական խնդիր։ Կարծում են, որ եթէ ընտրութիւնները նշանակվեն, հաւանօրէն տեղի կունենան նոյեմբերին, իսկ ամենաուշը՝ յունվարին։ Լիբէրալ և պահպանողական կուսակցութիւնների կօմիտէտները եռանդով պատրաստվում են ընտրողական պայքարի։

13 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացան 35, մեռան 15. կան հիւանդներ։

«Россія» լրագիրը գրում է. «Ֆինլանդական դատարանի վերջին օրերի նիստերը համոզում են մեզ, որ ըստ էութեան ֆինլանդական դատարանը իր վերջին խօսքն արդէն ասաց։ Այդ խօսքը ցոյց է տալիս, որ ճշմարիտ են՝ նրանք, ովքեր պնդում էին, թէ քաղաքական գործերը, որոնց մէջ մասնակցում են ռուս ծնվածները, թէկուզ յանցանքը կատարված լինի Ֆինլանդիայում, պէտք է քննվեն ռուսական դատարաններում։ Դա ստիպում է փոխել 216-րդ յօդուածը, որի մասին այնքան շատ խօսակցութիւններ եղան, սակայն չէ կարելի կասկածել, որ օրէնսդիր հաստատութիւնները կը գիտակցեն այդ գործողութեան այժմէութիւնը։ Իրանք ֆինլանդացիները ցոյց տուին, որ մասնաւոր հարցի ընդհանուրից զատելը յիրաւի այն աստիճանի հասունացել է, որ ստացել է բոլորովին ինքնուրոյն պետական հարցի բովանդակ նշանակութիւնը։

ՎԱԼԿԻ։ Անցեալ գիշեր նկատվեց մեծ հիւսիսափայլ։

ՏԱՇԿԵՆՏ։ Բացվեց յօբելեանական ցուցահանդէս։

ԿՕՏԷԼՆԻՉ։ Երէկ գիշեր նկատվեց հիւսիսափայլ։

ՕՄՍԿ։ Կօկչէդավի գաւառում այրվեց անգլիացի Բերգէլի կօնսերվի գործարանը. վնասները հաւասարվում են 700,000 ր.։ Գործարանը ապահովագրված չէ։

ՄՈՒԼԷՆ։ Զինւորական ինժեները գտաւ, որ «Րիպիւբլիկ» օդապարիկը չէ պայթել պտուտակի պակասութեան պատճառով։

ՊԱՐԻԶ։ «Րեպիւբլիկի» կործանումը մեծ յուզմունք է առաջացրել ամբողջ Ֆրանսիայում։ Բոլոր լրագիրները միաբերան ողբում են ճանապարհորդների կորուստը, կատաստրօֆայի մէջ տեսնում են ուժեղ հարուած՝ հասցված հայրենիքի պաշտպանութեան գործին։ «Տան» լրագիրը հանգանակութիւն բացեց զինւորական օդագնացութեան գործի համար։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Երէկ երեկոյեան քաղաքում և շրջակայքում նկատվեց հիւսիսափայլ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Վախճանվեց 77 տարեկան հասակում Դանիայի աւագ եպիսկոպոս Բարդամը։

ՊՐԱԳԱ։ Չեխական համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտէտը որոշեց «հօնօրիս-կաուզա» փիլիսոփայութեան դօկտորի կոչում տալ Պետերբուրգի համալսարանի պրօֆէսօր Սօբօլէվսկուն և ակադեմիկ Շախմատօվին։

14 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացան 42, մեռան 11։

Դանիական նախկին դեսպան Լէվէնէրնը, որ իր պաշտօնում մնաց ամբողջ 17 տարի, այսօր մեկնեց արտասահման։ Ճանապարհ դրին արտաքին գործերի մինիստրի օգնական Սազօնօվը, մինիստրութեան պաշտօնեաները, բրիտանական դեսպանը, դիպլօմատիական մարմնի միւս ներկայացուցիչները և դանիացիները։

ՆԵՐՉ։ Ուժեղ հեղեղ եղաւ։ Քաղաքի ցածր մասերն ամբողջովին ջրի տակն են, որը սակայն կամաց-կամաց իջնում է։

ՌԻԳԱ։ Հանդէսով դրվեց Ակսակօվի ժողովրդական տան հիմքը։

ՊԱՐԻԶ։ Ինժեներական մասի կառավարիչ գեներալ Րօկէն հեռագրում է զինւորական մինիստրին, որ «Րեպիւբլիկ» օդանաւի դժբաղդութիւնը բացատրվում է նրանով, որ կոտրված պտուտակը ընկել է և պատռել օդապարիկի երեսը։ Ոչ մի հիմք չը կայ ենթադրելու, թէ կատաստրօֆան չարամտութեան հետևանք է։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Մեծ հանդիսաւորութեամբ մահարձան կանգնեցվեց ռուս-եապօնական պատերազմում ընկած 200 ռուս զինւորականների գերեզմանների վրա։

ԲԷԼԳՐԱԴ։ Եկաւ ռուսաց նոր դեսպան հօֆմէյստէր Հարտվիգը։

ԲԵՐԼԻՆ։ Լատամը իր օդապարիկով անցաւ 18 կիլօմետր տարածութիւն, մնալով 120 մետր բարձրութեան վրա։ Ապա նա 2 րօպէ 10 վայրկյանում կատարեց պտոյտ 2500 մետր շրջանով։

ՕԴԵՍՍԱ։ Շքեղ հանդէսով կատարվեց գիւղատնտեսական արդիւնաբերական ցուցահանդէսի հիմնադրութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի։
(օ. մ.) 100—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—16

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) եայլն։ Ելեկտրականութիւն ռևմատիզմի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկներ։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Ընդունելութիւնը 4—5 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—9

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. ՑԷՅՏԼԻՆ
Ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւններ։ Արհեստական ատամներ։
Ընդունել. առաւ. ժ. 9-ից—երեկ. ժ. 7-ը։ Միքայէլեան պր. տ. № 22. (Անկիւն Սեմեօնօվսկայա փ. № 3), մուտքը Սեմեօնօվսկայա փողոցից։
(օ.մ.) 810. 100—11

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
„ԴԱՍԸՆԿԵՐ"
Առաջին տարվայ այբբենարան-ընթերցարան
ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
Զարդարված գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին
ԿԱԶՄԵՑԻՆ՝
Արշակ Չիլինկարեան և Տիգրան Ռաշմաճեան
Աշխատակցութեամբ Ստ. Իսահակեանի
ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կօպէկ
✦ Գրախանութներին զեղչ 25% ✦
Գումարով առնողներին 20% զեղչ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում (Թիֆլիս)։
(Հ. ու. շ.) 948. 10—1

Մամուլի տակից դուրս եկաւ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1) Դասատետր կրօնի Բ. տարի
2) Դասատետր կրօնի Ա. » (բարեփ.)
Իմ կրօնի դասագրքերը ցանկացողները կարող են դիմել Կովկասի բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовск. ул 20)։ Զեղչ 20, 25 և 35%.
Սահակ ա.-ք. Սահակեանց
825 (ե. ո.) 10—7



ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!
2 ր. 75 կ.։
Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» չեվիօտը, 4¼ արշ., տղամարդկանց հագուստի համար։ Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО", г. Лодзь, № 15.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։
(Հ.կ.) (В. 58110) 947. 0—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՕՐԲԷԼ ՕՐԲԷԼԵԱՆՑԻ
ՀԻՄՆՎԱԾ 1844 ԹՈՒԻՆ
(Լերմօնտօվսկայա փողոց, № 1)
Ընդունվում են երթևեկ աշակերտներ և աշակերտուհիներ, իսկ գիշերօթիկ միայն աշակերտներ, և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։
(Հ. ե. հ.) 941. 4—2

Գետաշէնի (Գանձակի գաւառի ծխ. դպր. համար հարկաւոր է
ՀԱՅ ԴՊՐՈՑԱԻԱՐՏ ՈՒՍՈՒՑԻՉ
կրօնի, երգեցողութեան, գծագրութեան և թւաբանութեան մօտ 20 դասի համար. ռոճիկ 400 ր. և բնակարան վառելիքով։ Դիմել՝ Чайкентъ (Елисавет. губ.) Попечительству арм. прих. училища.
(կ. ե.) 942. 2—2

ԹԻՖԼԻՍԻ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են
Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.։
(Alto) երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 1 ր. 50 կ.։
(Basso) երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 2 ր.։
(Soprano) երգեցողութիւն ս. պատ վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.։
(Tenore) երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.։
Դիմել՝ Въ Тифлисъ. Центральной книжной торговлѣ. 854 (Հ.) 10—4

ԴԱԴԵԱՆ ամուսինների կազմած դասագրքերի պահեստը գտնվում է «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութում
Լոյս են տեսել
ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ա. հ. V բ. գ. 45 կ.
ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ա. հ. III բ. գ. 55 կ.
ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ բ. հ. IV բ. գ. 50 կ.
Գումարով գնողներին 20% զեղչ։
Տպագրվում են միւս հատորները։
(5,9,14) 856. 6—6

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
վաճառվում են Գր. ա.-ք. Երզնկեանցի հետևեալ աշխատութիւնները.
Ք. խտօնէական բարոյագիտութ. գ. 50 կ.
Ուսում տօնացուցութեան. » 50 կ.
Աշխարհագրութիւն Տարրական դասընթացք Հայաստանի աշխարհագրութեան համառօտ տեսութեամբ 60 կ.
Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ
Տարրական դասընթ. ա. և բ. տ., 30 կ.
գ. և գ. տարի . . 35 կ.
851. (ա. հ.) 10—7

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենօգրաֆիա։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку. учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. շ.) 731. 20—11

„ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ" Վառնայի «Իրաւունք» թերթի տպարանից լոյս տեսաւ Արփիար Արփիարեանի (Հայկակ) գրական արտադրութեանց գլուխ գործոցը նկատված «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑԸ», մի երկ, որ իրական պատկերացումն է Թիւրքահայ կեանքի։ Գինն է 50 կ.։ Դիմել՝ Journal «Iravounk», Varna (Bulgarie).
893. (Հ.) 3—3

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան խնամատարութեան տակ.
Պետերբուրգի Կայսերական Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
(Чавчавадзевская № 20)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Երրորդ տարեշրջան)
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏ. 15-ԻՑ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԱՄԵՆ ՕՐ ԵՐԵԿՈՆԵՐԸ 5—7 Ժ.
Աւանդվելիք առարկաներն են՝ նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն (փայտի և պղնձի վրա), քանդակագործութիւն, երկրաչափական ձևագիտութիւն, հեռանկար (պերսպեկտիվ). գոյների և ստուերների տեսութիւն։
ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐ ԵՆ
ԱՒԱՐՏՈՂՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՏՏԵՍՏԱՏՆԵՐ
Տարեկան վճարն է 40 ր. կամ ամսակ. 5 ր., դպրոցականների համար 25 ր. և 3 ր.։ Յաճախել ցանկացողները թող բարեհաճեն յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. անձնական տեսակցութեան համար ամեն օր առաւ. 9—11։ Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ. почт. ящ. 133. 771. (ե. շ.) 8—8

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՈՒ Լ. ՇԱՆԹԻ
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի դասագիրք
Ա. տարի երրորդ տիպ . . . . 40 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ . . . . . 45 կ.
Գ. տարի, առաջին տիպ . . . . 55 կ.
Դ. տարի, առաջին տիպ. . . . . 65 կ.
Ա. և Բ. տարիներն ընդունված են կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից իբրև դասագիրք պետական դպրոցի համար։
Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները Թիֆլիսում՝ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ, Բագւում՝ Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի, Շուշում՝ Բ. Տէր-Սահակեանի։ և Գորիսում՝ «Սասուն»։
ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԻՆ ԶԵՂՉ 20%
(կ. ե.) 21—19

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։
Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։
→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←
Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(օ.մ.) 774. 20—13

Օգտվեցէք դէպքից
ՇԱՏ ՇԱՀԱՒԷՏ ԵՒ ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
հետևեալ կալուածները՝ արտասահման տեղափոխվելու պատճառով՝
1) Երկ-յարկանի տուն՝ երկ-յարկանի ֆլիգէլներով և նկուղով, 175 սաժ. գետնի վրա, Թիֆլիսի I քաղաքամասում։
2) Երկ-յարկանի տուն՝ երկ-յարկանի ֆլիգէլներով և 5 կրպակով, 120 սաժ. գետնի վրա, VIII քաղաքամասում (Չուղուրեթում)։
3) Մի այգի՝ խաղողի և այլ պտղատու ծառերով, 2000 սաժ. գետնի վրա՝ VI քաղ.։
4) Կարսի նահանգի Ներքին Քեդիկլեր գիւղին կից՝ օրական 500 պուդ մաքուր ալիւր պատրաստող ջրաղաց, որը մօտ է Քուրակ-տարա երկաթուղու կայարանին «Դեկրեդեգրմանի ջրաղաց» անունով և դրա հետ 8 դեսեատին գետնի վրա պտղոց մրգի և զանազան ծառերով հարուստ այգու ¼ մասը։
5) Նմանապէս զանազան տնային շարժական հարկաւոր կահ-կարասիք, արծաթեղէն և այլ իրեղէններ։
Յիշեալ կալուածները բերում են տարեկ. 8500 ր. եկամ. և կարելի է գնել՝ ջոկ-ջոկ։
Պայմանների մասին պէտք է դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Ново-Арсенальная ул. № 2. соб. домъ, Ованесу Мурузову.
—○◇— ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՎԵԼ ԱՄԵՆԱՁԵՌՆՏՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ —◇○—
(կ. ե.) 901. 8—3